

և որ ազգութիւն մը ունի: Ի՞նչ հարկ կայ որ ուրիշներուն աղէկ բաներէն օրինակ առած ատենը՝ իւր սեպհական աղէկութիւնները մէկ-գի դնէ. մեղք չէ, ամօթ չէ Հայու մը որ նիւթական առուտուրի այնքան յարմարութիւն ունենալէն ետեւ՝ այս բարոյական առուտուրին մէջ չարաչար խաբուի, ուրիշներուն փտտած ապրանքները սուղ սուղ գնէ եւ իւր ազգայնոցը ծախէ: Թող Հայերը մեղուի պէս աշխատին միաբան՝ մինչեւ հեռու երկիրներ, մինչեւ հեռաւոր ազգաց մէջ, միայն անուշահոտ ու մեղրալից ծաղիկները փնտռելու, եւ միայն անոնց մէջէն ազնիւ մեղր ու մոմ՝ հաւաքելու՝ բերելու ազգային փեթակը. եւ ահա իսկոյն երկպառակութիւնները կղաղբին, եւ հասարակաց օգտակար ճանչցուած գործերը շուտ շուտ առաջ կերթան: Դիցուք թէ ամէն ազգ ալ իրեն համար մէկմէկ փեթակ է լաւ մեղուներու, եւ ոչ թէ պիծակի նման աւաղակներու բազմութիւն.

թիւն. բայց ինչպէս որ հարիւրաւոր փեթակներ եղած տեղն ալ՝ լաւ մեղուն իւր փեթակը աղէկ կճանչնայ ու հոն կտանի հաւաքած մեղրն ու մոմը, այսպէս պէտք է ընէ նաեւ ազգասէր Հայը, եւ ամենայն Հայ:

Վերջապէս ազգային երկպառակութեանց գլխաւոր պատճառները երբոր վերցուն, երկրորդական պատճառները վերցնելու ամենեւին դժուարութիւն չմնար: Իւրաքանչիւր քաղաքի կամ գեղի մէջ թէ որ իրեք իրեք հոգի ալ գտնուին ազգասէր ու խաղաղասէր, միաբանական հոգին կտիրէ բոլոր ժողովրդեան վրայ, եւ Աստուծոյ ձեռքը կառջնորդէ անոր իբարին եւ իկատարեալն, կատարելով իւր աստուածային խոստմունքը որ ըրած է՝ ըսելով. «Եթէ երկու իձէնջ միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց, «զինչ եւ խնդրեսցեն» եղիցի նոցա . . . զի «ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յա- «նուն իմ, անդ եմ ես իմէջ նոցա»:

Յ Ո Վ Ս Ե Փ Ա Յ Զ Ե Ր Ք Է Զ Ե Ա Ն Յ Ն Ա Մ Ա Կ

ա ո

Ս Տ Ե Փ Ա Ն Ո Ս Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ն Ա Զ Ա Ր Ե Ա Ն Յ

Պարոն Զերքէղեանցին գրուածոյն շարա-յարութիւնը տպագրելէն առաջ հարկ կհամարիմք երկու խօսքով փարատել այն անհիմն կասկածները որ առաջին հատուածը կարգացող բարեմիտներէն ոմանք ունեցեր են: Այն կասկածներուն մէկն այս է եղեր թէ արդեօք Աղաւնին ալ անձնական եւ մասնական կռիւնները հրատարակել ու ազգին մէջ երկպառակութիւն տարածող օրագրաց ճանապարհորդ կուղէ բռնել. միւսն ալ այս՝ թէ արդեօք Աղաւնին ալ կրօնական կռիւնները ազգիս մէջէն դադրեցնելու տեղ՝ աւելցուցած չըլինիր այսպիսի հրատարակութեամբ:

Առաջին կասկածը բոլորովին անհիմն է եւ անտեղի: Եթէ Աղաւնին միտք ունենար իրեն թերթերը անձնական կռիւներու ասպարէզ ընել, ոչ թէ ամիսը երկու անգամ, այլ ամէն օր ալ ելնէր, եւ ամէն մէկ երեսները այնպիսի կռիւներով միայն լեցնէր, դարձեալ նեղ կուգային իրեն թերթերը: Աղաւնին այնչափ հեռու է անձնական վրէժխնդրութենէ որ գոհ սրտով ետ կեցեր է առ

այժմ՝ նաեւ Հիւսիսային եւ անոր նման մէկ երկու օրագրաց խօսքերը քննութեան տակ ձգելէն, թէպէտ եւ տարւոյս սկիզբները այնպէս երեւցեր էր իրեն եւ իւր բարեկամներուն որ անպատճառ հարկաւոր է այդ քննութիւններն ընել:

Երկրորդ կասկածը ըստ իմիք հիմնաւոր է, եւ ըստ իմիք անհիմն: Հիմնաւոր է այս կողմանէ որ Աղաւնին իրեն պարօք ճանչցած է իւր ազգին կրօնը պաշտպանել կրցածին չափ ընդդէմ ներքին եւ արտաքին թշնամեաց. եւ ով որ այսպիսի պաշտպանողական պատերազմին մէջ օրինաւոր կերպով օգնական լինի իրեն, սիրով կընդունի գնա իւր գործակից: Իսկ անհիմն է այս կողմանէ որ Աղաւնին ոչ երբէք փանարիզով ըստաւ կրօնամոլութիւնը ցուցուցեր է՝ պատերազմ բանալով կամ յարձակելով ընդդէմ օտարազգի բրիտանից դաւանանքին. ուրեմն Պարոն Զերքէղեանցին գրուածքը հրատարակելովը՝ ոչ թէ կրօնամոլ (փանարիզ) պիտի երեւնայ բարեմիտ մարդկանց, այլ ազգասէր (փարիօք) եւ իւր եկե-

ղեցին օրինաւորապէս պաշտպանող :

Թերեւս Պարոն Զերքէղեանցը իւր գրուածքին մէջ քիչ մը աւստիկ խօսած երեւնայ ընդդէմ Պ. Նազարեանցին վարդապետութեանցը . թերեւս քանի մը իմաստներ կամ դարձուածքներ կամ խօսքեր չափազանց եւ աւելորդ երեւնան ոմանց՝ կարծեցեալ խաղաղասիրաց կամ ազատամտաց եւ կամ անխորականաց : Իայց մեք պէտք է հարցնեմք այնպիսեաց նախ՝ թէ կարգացքը ու հասկըցքը են իրենք Պարոն Նազարեանցին գրուածքներն որ կարողանան եւ իրաւունք ունենան ըսելու թէ Պարոն Զերքէղեանցին նորա դէմ գրածները չափազանց սատիկ են : Երկրորդ, հարցընեմք թէ այդ փափկասիրտ եւ խաղաղասէր քննիչները տեղեկութիւն ունին արդեօք թէ Պարոն Նազարեանցին գրուածքները սրբան վնաս ըրեր են եւ կընեն անոնց՝ որ միամտութեամբ կկարգան զանոնք ու կխաբուին :

Եթէ կարգացած չեն, կամ թէ վնասները չեն տեսներ, չեն կրնար ոչ Պարոն Զերքէղեանցին գրուածքին վրայ ուղիղ դատաստան ընել, եւ ոչ Աղաւնույն այն գրուածքը հրատարակելը՝ մեղադրութեան արժանի բան մը համարել՝ իբրեւ գործ կուտասէր օրագրի :

Օրագիր մը այն ժամանակը կըսուի կուտասէր ու խռովարար՝ երբոր իրեն բան ու գործ կընէ մէկուն մէկալին անունը քաշքշէլ, ծամծմել, առանց յաջ եւ յահակ նայելու . երբոր իրեն թերթերը լեցընէ անվայել ծաղրածութիւններով ընդդէմ պատկառելի անձանց . երբոր ազգին վէրքերը պատրուելով ու ճղքըռտելով ուղէ (իբր թէ) բժշկել . երբոր բամբաստէր ու դատարկապօրտ մարդկանց պէս՝ թեթեւութեամբ եւ առանց ստուգելու գիր անցընէ ու հրատարակէ սր եւ իցէ ազգային եւ մասնաւոր լուրեր . երբոր կեղծ ու շինծու անուններով, կամ անանուն յոգուածներ հրատարակելով, ազգային միջնորդար ապականարար ու ախտահաւակ խօսքերով լեցընէ . երբոր իրեն ինչ գոյն ունենալը ծածկելու եւ իւր չարամիտ գլուխը պարտկելու մտքով՝ շատ անգամ իրեն սեպհական անձնական կարծիքները դուրս տայ՝ այսպէս կըսեն, այսպէս կըսուի, կըսուի, կըսեն, մեզի այսպէս կըսեն, եւ ասոնց նման խօսքեր ըսելով :

Եթէ Աղաւնին մինչեւ ցայժմ այդ ցածութիւնները չէ ըրած, եւ այսուհետեւ ալ պիտի չընէ, ըսել է թէ կուտասիրութենէ ալ շատ հեռու է, եւ Պարոն Զերքէղեանցին նամակը հրատարակելովը՝ պէտք չէ որ կուտա-

սէր համարուի : Ասկէց ալ աւելի զօրաւոր ապացոյց է Աղաւնույն կուտասէր չլինելուն այս գիտելու բանը, որ Աղաւնին լաւ գիտէ թէ ինչ է բուն պատճառը ոմանց Պ. Զերքէղեանցի գրուածքին Աղաւնույն մէջ հրատարակուելը չուղեւուն, եւ սակայն առ այժմ կըրէ խոհեմութեամբ :

(Նորայարուրիւն. Տեւ էջ 42 եւ 53.)

Ձեր լեզուի նորաշինութիւնը, պ. Նազարեանց, զարմանալի տեսարան է մեր ազգի համար . դա մին նոր ազգային կենդանի կատակերգութիւն է, որի մէջ խաղարկութեան գլխաւոր պաշտօնը կատարուածս դու, ոտքից մինչեւ գլուխ նորասքանչ լուսաւորութեան վերանորոգուած փորձապետ, իսկ երկրորդական պաշտօնները լցուցանում են քո համախոհ ընկերները՝ Նալբանդեանց, Ուսումեանց, Սադան, Ղուկասեան, Կիրակոսեան եւ այլ մին քանի սոցա նման՝ քո լուսաւորութեամբ լուսաւորուած մարդիկ : Յետակ կատակերգութիւն . ուր առանց ուսման յանկարծ կրթուած իրօսանուէր սուտ ազգասէրներ պատկերացնում են մեզ նոր լեզուի շինութիւն՝ ազգային լեզուի, կրօնի եւ դաստիարակութեան փրատակների վերայ, եւ այն՝ ազգային լեզուի : Այդ կատակերգութեան մէջ ներգործող անձինքը, Բարկունեան լեզուների խառնակութեանը ներկայ գտանուող մարդկանց նման՝ չեն հասկանում ոչ միմեանց խօսքը եւ ոչ այլոց ասածը . մինը ասումէ խուժ, միւսը դուժ, եւ դորանից ծագումէ այն խռածագութիւնը բարբառը, որով խօսում են Նազարա-Նալբանդա-Սադայական նոր լուսաւորութեան կամուրջի վերայով անց կեցած մարդիկ :

Այդ խռածագութիւնը բարբառի շինութիւնը առաջարկուածս գիտնական Արարատեանին՝ իբրեւ պատասխան նորա մանրամասն քննութիւններին՝ երկհատոր գրքի մէջ տպագրուած, ուր մեր հայերէնագէտ եւ հաստագէտ Յամարիտ պատուոյ արժանի ուսումնականը հաւաքել է եւ հերքել է, ազգի զգուշութեան համար, քո բազմաթիւ սխալները ընդդէմ ձայնը կրօնի եւ լեզուի : Նորա հարիւրաւոր խօսքերի առաջը ղնուածս քո կատակերգական խաղը, որը որ խաղ եւ անում ազգի մէջ . արդարացնումս քեզ այնպիսի բառերով, որ ցոյց են տամ, թէ նոցա արտասանողի երեւակայութիւնը խանգարուած է . ասումս՝ « Հնացած եւ թույլ նախ ղեկավարքը յաղթող ալիքների բռնութեամբ կորուսանելով նախ ղեկը, պարանները եւ առագաստները, հնար էին որոնում մի կերպով դէպ ի ցամաք դուրս գալ . այսպէս՝ հնութեան պատերազմը ընդդէմ նորութեան մեր Հայերիս մէջ : » Ողորմի՛ր մարդկային բանականութեանը եւ անուանը, եթէ այդչափ անխղճարար եւ վարուում դուրսորի կոչման հետ : Ի՞նչ նախ վրայ եւ խօսում . ի՞նչ ալիքներ են երեւում քո աչքերիդ . ի՞նչ ղեկ, ի՞նչ առագաստներ են պատկերանում քո երեւակայութեան : Նոյն եւ նման ձեռով, նոյն խռածագութիւնը նորաշին բարբառով, Նալբանդեանցը, ազգային կատակերգութեան երկրորդ խաղարկուն, երբ մեր պապացոյցը էինք քո գրուածների անբարոյականութիւնը, խօսել էր բանագոռնանք՝ չգիտեմք ի՞նչ վարագործի վերայ, չգիտեմք ի՞նչ պանդոկների վերայ, էմինի քերականութեան սխալների վերայ : — Անբաւական երազք . խօսական ցնորք :

Ի՞նչ հնութեան եւ նորութեան պատերազմի վերայ է խօսածդ . արդեօք հին ֆիլոլոգիայի կանգիդատին ընդդէմ գրուածներն եւ կոչում նոր պատերազմ, թէ քո հին եւ միջին դարերի նման մեր մէջ յարուցած կրօնական վէճերը եւ տարածացնութիւնը . արդեօք քո առաջարկած մեր եկեղեցու վերանորոգութիւնն եւ կոչում նոր պատերազմ ընդ-

գէժ Հայոց բազմադարեան եւ անփոփոխ դասնումեանը, Թէ մեր նոր գրած հերքումն քո հին պրոտեստանտեան աղանդի կրկնումեանը: Արդեօք քո հարիւրաւոր սխալանքը մեր կրօնին ու լեզուին ընդդէմ ցոյց տալն եւ ասում պատերազմ, Թէ քո շարունակ եւ անընդհատ շարափստութիւնը մեր հաւատի, լեզուի, կամութիւնի, եկեղեցու եւ ամենայն մեր ունեցած արժանաւոր սեփականութեան վերայ: Մեր այդ բաների մէջ չենք տեսնում նորութեան եւ հնութեան պատերազմ, չենք տեսնում նոր եւ հին ժամանակի կռիւ. տեսնում ենք միայն, Թէ քո գրումները մաքառում են ամենայն ժամանակ ճշմարտութեան հետ: Շատ բան կայ հին եւ ճշմարիտ. շատ բան կայ նոր եւ սուտ. եւ միայն անդատող նորասէրների յատուկ սովորութիւնն է՝ ամենայն ինչ նոր՝ համարել ճշմարիտ, ամենայն ինչ հին՝ սուտ եւ սխալական: Մահմետի հաւատը 622 տարով նորագոյն է քան Թէ քրիստոնէութիւնը. բայց մահմետականութիւնը սուտութիւն է, քրիստոնէութիւնը՝ ճշմարտութիւն: Պրոտեստանտների, լուտերականների, կաթոլիկների եւ այլ սոցա նման աղանդաւորների քրիստոնէական հաւատի ինքնահնար վերանորոգութիւնը 1200 տարու չափ նորագոյն է քան Թէ մեր Հայոց քրիստոսափիմն, առաքելաշէն, հայրապետաբարձր, ամենամաքուր քրիստոնէութիւնը. բայց եւ ասագոյն եւ մոլորաշաւիղ: Բո նոր լեզուի շինութիւնը նոր բան է, բայց եւ ծիծաղաշարժ եւ պզգալի. Հայոց լեզուն գիտութեամբ եւ անգիտութեամբ խանգարելու հանդէս. մեր հին լեզուից, գերմանական լեզուի ձեւերից եւ քո երեսակալական անալոգիայից բաղադրուած, ինքնահնար, պայմանաւոր լեզու, բառից եւ հնչմանց ահուկի խառնուրդ: Հին են, շատ հին են քո մաքերը մեր եկեղեցու վերանորոգութեան մասին. դա նոր բան չէ. Լուտերականներու եւ նոցա ժամանակակից աղանդաւորների վեշտասաներորդ դարումը ծնած ընթրմացիայի աշակերտանման կրկնութիւնն է, հարիւրաւոր տարիներով բողոքականներից մեզ առաջարկած, բայց սուտ եւ անընդունելի: Մեր ժամանակի նոր երեսակներից մինչ էր Իւլի Պատարանան, այդ մարդակերպ եւ գազանակերպ հրէշը. եւ Թէպէտ նոր բան էր, բայց բնութեան հին եւ հաստատուն օրէնքներից դուրս, վասն որոյ եւ հրէշ. քո նկարագրած եւ քո ձեռով հասկացած նորութեան մարմնաւորութեան պատերազմ էր հնութեան հետ, այսինքն՝ բնութեան անփոփոխ եւ յաւիտեան ներգործող օրէնքների հետ, վասն որոյ եւ մարդկային մաքին ընդդիմաճառ եւ անստանելի: Մարդու օր բոտ օրէ լուսաւորութիւնը, որովհետեւ պահանջում է ժամանակ, կատարելագործում է եւ բարձրանում է ժամանակով, պատերազմ եւ կողում հին ժամանակի հետ. չէ. այդպէս չէ, պէտք էր ասէիր, նոր ժամանակիս, Աստուծոյ նախախնամութեամբ լուսաւորուած եւ հարազատ Հայերը պատերազմում են քո նորաղանդ մոլորութեան հետ: Հայերը՝ փառք՝ Աստուծոյ, սկսել են հասկանալ ուսման եւ լուսաւորութեան օգուտը եւ անհրաժեշտ հարկաւորութիւնը. մին աներեւոյթ զորութիւն զարթեցրել է մեզ բազմաժամանակեայ Թմրութիւնից. մեք սկսել ենք հասկանալ, Թէ ճշմարիտ լուսաւորութիւնը պէտք է հիմնուած լինի ազգայնութեան վերայ, որի գլխաւոր պայմաններն են ազգային կրօնը եւ լեզուն. իսկ որ ինչ հակառակ է ազգայնութեան, որ ինչ յայտնի կամենում է քանդել եւ ասկեղ ազգայնութիւնը՝ սուտ լուսաւորութեան խաբարայ ձեւերով, այն ճշմարիտ լուսաւորութիւն չէ, այլ նորա մտախար երևոյթը միայն. որոգայթալար եւ ազգասպան լուսաւորութիւն, որից առաւել նախադասելի է ազգի պարզ եւ նախագոյ բնաւորութեան անկրօնատ պահպանութիւնը, նա եւս խաւարը բարիլոնեան: Կայ պատերազմ մեր մէջ, քո շնորհիւ յարուցւած. այլ պատերազմ ոչ Թէ հին եւ նոր լուսաւորութեան, կամ հին եւ նոր ժամանակի, այլ ճշմարիտ եւ խաբեական լուսաւորութեան մէջ: Նոր եւ ճշմարիտ լուսաւորութիւնը հիմնուած է հին լուսաւորութեան վերայ. հին դարերի փորձերով հարստանում է եւ յառաջ է գնում այն տեղից, ուր վերջանում է անցեալը. նա չէ պատերազմում հնոյն հետ, չէ կործանում ամենայն բան, ինչ որ իւր բանից առաջ հնարած է ու գտած. այդ յատուկ է սուտ լուսաւորութեան, որ ներգործելով նորութեան անունով՝ Թակարդում է նորասէրների անդատող միտքը, որոց խելքը միշտ լինում է աչքերի մէջ եւ ոչ Թէ գլխումը. նոր եւ ճշմարիտ լուսաւորութիւնը, հին եւ ճշմարիտ լուսաւորութեան հետ ձեռն ընդ ձեռն յառաջ է քայլում նորանից ծնած եւ նորանով զօրացած, նորանով կազդուրուած եւ փորձուած. լցուցանում է նորա պակասորդը. կատարելագործում է նորան ժամանակի օգնութեամբ. « Ոչ եկի լուսանել զօրէնս, այլ ընուլ. » ասում է Տէր: Մեր մեծապատիւ հայկաւանը Առաքել Արարատեան ոչինչ տեղ, ոչինչ ժամանակ հակառակ չէ եղել աշխարհաբառ լեզուի գործածութեանը գրականական ասպարէզում, որպէս դու զրպարտում եւս մեր ազգի մէջ պատուելի եւ բազմաշխատ գիւնականին. այդպէս սուտ ասելը նման է ցերեկով գողութեան Վարդապետ: Նորա Դիմաբարձր հերքում է քո սեփական, մասնաւոր եւ պայմանաւոր նոր ասած լեզու, եւ ոչ Թէ մեր ընդհանուր աշխարհաբառի գործածութիւնը: Այդ հեշտիմաց բանը չհասկանալով, քո լեզուի նորաշինութեան վերայ գրուած բանը դարձուցանում եւս մեր աշխարհիկ լեզուի վերայ առ հասարակ, եւ դորանով ցոյց եւ տալ նախ՝ քո չհասկանալը, երկրորդ՝ քո սուտ զրպարտութեան հոգին: Թոյլ տանք նա եւս մի բոպէ, որ իբր Թէ արժանապատիւ Արարատեանը քո երեսակալութեան մէջ հակառակ է եղել մեր աշխարհաբառ լեզուին. բայց մի՞նչ այդ բանը կարող է արդարացնել քեզ նոյն ուսումնական գրութեան լեզուի եւ կրօնի ընդդէմ քո անհամար սխալականութիւնը. նորա արդարադատ ցուցմանց առաջ եւս պայման ձուել եւ, եւ մի միայն պատասխան եւ գտել աշխարհաբառ լեզուի գործածութիւնը ամենուն ասելու համար:

Դուք, պ. Նազարեանց, զարմանալով հարցնում էք մեզ, Թէ մեր կամ որ տեղ էք ասել Թէ՝ « Ներ մտքով Հայոց ազգը կուսաւորուի, եւ Թէ եօթն խորհրդի տեղ ընդունի երկու խորհուրդ: » Այդ ձեր զարմանքը մեզ չպատճառու ոչինչ զարմանք. որովհետեւ մեզ յայտնի է, Թէ դուք ձեր սեփական գրութեան միտքը երբեմն չէք հասկանում, երբեմն հետեւում էք փոփոխել, երբեմն բոլորովին հրաժարուիլ նոցանից՝ այլ եւ այլ մեկնութիւններ տալով նոցա: Այս անգամ անհասկացողութիւնն է եղել պատճառ. ձեր հակաճառութեանը ու զարմանքին. վասն որոյ հարկաւոր ենք համարում մեկնաբանել ձեզ ձեր գրութեան նշանակութիւնը: Ամենայն տեղ եւ ամենայն ժամանակ, ձեր կամ մտացածին անունով գրում էք, Թէ Հայոց ազգը կոյր է, անուսումն է, անկիրթ է. Թէ այսուհետեւ (այսինքն՝ ձեր պէս երկնքից իջած ուսումնական յայտնուելուց յետ) ազատութիւն խաւարի բարիլոնեան գերութիւնից, եւ այն, եւ այն: Այդ խօսքերից միայն քո եւ Սադայի լոգիկայով հնար չէ եղրակացուցանել, Թէ քո ամենայն գրութիւնը ունի նպատակ Հայոց ազգը լուսաւորելու. ուրեմն եւ երկու խորհուրդ ընդունելը՝ եօթնի տեղ, առաջարկուած մեր ազգին լուսաւորութեան նպատակով. եւ Թէ ոչ, հարկաւ պէտք է ընդունես, Թէ խորհրդների Թիւր այդպէս ինքնակամ կրճատելով, դու կամենում ես բարիլոնեան խաւարը յետ բերել, եւ ոչ Թէ փարատել այն խաւարը, կամ Թէ՝ քո ասացածները լուսաւորութեան մտքով չեն, ուրեմն բոլոր տգիտութիւն է եւ ոչ Թէ լուսաւորութիւն. կամ այս եւ կամ այն հարկաւ պէտք է ընդունես. միջին ճանապարհ չկայ այս տեղ փախելու համար: Այս տեղ ինքդ հրաժարում ես քո քարոզած լուսաւորութիւնից, եւ կարծեմ փոքր միջոցում եւրոպական լուսի անունով հնարած լուսաւորութիւնը բոլորովին կհերքես. յայտնի բան է՝ փոքր առ փոքր, յանկարծ չէ կարելի ասել, Թէ ողջ խօսածներդ ծուռ են, անհիմն ու վնասակար. Սադան լաց կլինի, նախադեանցը կփախչի Ամերիկայ:

(Աստուծոյ յառաջիկայս.)